

ԱՐԱՐ ՔՈՍՅԱՆ

ԽԵԹԱԿԱՆ KUB XXVI 62 ՍԵՊԱԳԻՐ ՏԵՔՍԱԸ ԵՎ ՎԵՐԻՆ ԵՓՐԱՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի քաղաքական պատմության, անվանաբանության, տեղագրության և հարակից խնդիրների ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի մ.թ.ա.XV դարի վերջերով կամ XIV դարի սկզբներով թվագրվող մի խեթական սեպագիր տեքստ¹, որն առ այսօր ինչպես հարկն է չի մեկնաբանվել հայագետների կողմից²: Պատճառը, թերևս, այն է, որ այստեղ անվանապես չեն հիշատակվում մ.թ.ա.II հազարամյակում Հայկական լեռնաշխարհի մեզ հայտնի երկրները կամ դրանց տարածքում գտնվող բնակավայրերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ խեթագիտական հրատարակություններում, մինչև վերջին շրջանը, մեր տեքստում վկայված տեղանունների մի հատվածը, որը, ինչպես կտեսնենք ստորև, գտնվել է վերինեվրատյան գոտում, որևէ կերպ չէր տեղադրվում:

Զննարկվող տեքստը իրենից ներկայացնում է միջին խեթական դարաշրջանի արքա Թուդխալյաս I(II)-ի կամ նրա հաջորդ Առնուվանդաս I-ի օրոք Խեթական տերության քաղաքական ազդեցության հյուսիսարևելյան գոտում գտնվող շրջանների բնակավայրերի հետ զինծառայության մասին կնքված մի վրաստաթուղթ: Ծառայության վերցվող զինվորները թվարկվում են անվանապես և ըստ բնակավայրերի: Դժբախտաբար, այս ընդարձակ տեքստից պահպանվել է միայն I և IV սյունակների առաջին կեսը: Այնուամենայնիվ, այս պահպանվածն էլ բավարար է մեզ հետաքրքրող խնդրի լուսաբանման համար:

Ստորև ներկայացնում ենք տեքստի IV սյունակի (Հակառակ կողմ) վերջին չորս պարբերությունները:

ՀԿ IV

26') 50 ERIN^{MES URU} Mu-ut-ha-l[i]?....

27') 50 ERIN^{MES URU} Ta-at-t[a]?....

- 28') ŠU-ŠI ERIN^{MEŠ URU} Ki-i[l]....
 29') I ME ERIN^{MEŠ URU} Ta-x[.....
 30') IO ERIN^{MEŠ URU} Aš-du-he-e-r[a(-)]...
 31') SU.NIGIN 60 ME 35 ERIN^{MEŠ} KUR^{URU}.....

-
- 32') Wa-aI-ta-hi-is LÚ^{URU} Ha-x[.....
 33') Ku-u-wa-aš LÚ^{URU} Ša-a-la n[u-za? li-in-ki-ya-
 34') LÚ^{URU} E-er-hi-ta nu-za li-in-k[i-ya(-)] ...
 35') LÚ^{URU} Li-it-ta nu-za li-in-ki-ya(-)] ...
 36') H[i]-i-n[i]-is LÚ^{URU} Te-mi-ya Ū-U[L
 37') I^UDJUB.SAR I-NA^{URU} Ha-at-ti

-
- 38') Ka-a-si-ya-ra DUMU Ta-ra-aš-ku-il DUMU A?-[....
 39') Pát-tal-li-ya DUMU U-ra-wa-al-ku-i(-)[....
 40') DUMU Pa-a-ta Kal-ma-ha-zi-ti DUM[U
 41') Tar-hu-un-da-zi-ti DUMU Ku-uk-ku(-)[....

-
- 42') x[....
 43') Š[U.NIG]IN 6+[x

ՀԿ IV

- 26') «50 զինվոր Մոտխալ[h^o(-)] քաղաքից, [.....
 27') 20 զինվոր Տատտ[ա^o(-)] քաղաքից, [.....
 28') 60 զինվոր Կիլ[h^o(-)] քաղաքից, [.....
 29') 100 զինվոր Ta-x[.....] քաղաքից, [.....
 30') 10 զինվոր Ասուխերա(-)^o քաղաքից, [.....
 31') Ընդամենը՝ [..... երկրի] 635 զինվոր:

-
- 32') IHa-x[.....] քաղաքից Վադտախիսը, [..... X քաղաքից, X-ը],
 33') Սալա քաղաքից Կուվասը: Եվ [նա երդում տվեց^o: X-ը]
 34') Էրխիտա քաղաքից: Եվ [նա] երդում տվեց^o: X-ը]
 35') Լիտտա քաղաքից: նա երդում տվեց^o:]
 36') Խիմ[ի]սը Տեմիյա քաղաքից չ[ի երդվել/չերդվեց:]
 37') [Գ-]րիչը Խաթթուսասում:

-
- 38') Կասիյարան՝ Տարասկուիլիի որդին, Ա-[.....]-ի որդին, [.....
 39') Պատտալիյան՝ Ուրավակուի[ս]ի որդին, [.....
 40') Պատայի որդին, Կալմախսցիտին՝ [.....]-ի որդին,

41') Թարխաւնդացիտին՝ Կուկկու(-)[...]-ի որդին, [.....]

42') ...

43') Ը[նդամեն]նը 6[... զինվոր]»:

Ձինվորների ցուցակը կազմված է երեք տարբեր սկզբունքներով.

1) 26'-31':

Տեքստի այս հատվածում զինվորները թվարկվում են ոչ անվանապես, այլ ըստ բնակավայրերի: Արդյունքում նշված 635 թիվը, ակնհայտորեն, ընդգրկում է նաև տեքստի կորսված հատվածում և նախորդ տողերում հիշատակվող զինվորների ընդհանուր քանակը:

2) 32'-37':

Այստեղ արդեն ցուցակն ընթանում է անվանապես: Վերջին տողում նշվող «գրիչը» կարող էր լինել մայրաքաղաք Խաթթուսասում այս ցուցակն արձանագրողը (հնարավոր է նաև այլ բացատրություն):

3) 38'-41':

Այս հատվածում թվարկումը կատարվում է այլ սկզբունքով՝ զինվորն ըստ հայրանվան:

Առաջին և երրորդ ցուցակները գրեթե հնարավորություն չեն ընձեռում որևէ պատկերացում կազմելու զորահավաքի աշխարհագրության վերաբերյալ: Առաջին ցուցակում հիշատակվող բնակավայրերը խեթական մյուս տեքստերում այլևս վկայված չեն: Ինչ վերաբերում է երրորդին, ապա անձնանունների առկայությունը կարող է վկայել միայն տվյալ տարածքի էթնիկական բովանդակության մասին (այդ մասին տվելի ուշ):

Երկրորդ ցուցակի տեղանունները հիմքն են, որոնցից ամբողջությամբ պահպանվել են չորսը, իսկ մեկից՝ առաջին նշանը և երկրորդ սեպախմբի սկիզբը (երկու հորիզոնական սեպեր):

Ha-x[.....]

Sala

Erhita

Litta

Temiya

Սրանցից Litta-ն վկայված չէ այլ տեքստերում, իսկ վնասված տեղանվան մասին դժվար է որևէ հետևություն անել, քանի որ խեթական սեպագիր նշանների ցանկում երկու հորիզոնականով սկսվող շատ վանկային նշաններ կան: Ինչ վերաբերում է մյուս երեքին, ապա սրանց խնդիրը այլ է:

Erhita.

Գեո 1931թ. Է.Ֆոտերն իրավացիորեն առաջարկել էր Erhita-ն նույնացնել խեթական երկու այլ տեքստերում վկայված ^{URU}Arhita-ի հետ³։

Այսպես, Arhita-ն հայտնի է վերինեփրատյան երկրների հետ կնքված պայմանագրից՝ որպես հակախեթական ապստամբության մասնակից շրջան⁴։ Խեթա-հայասական ինչ-որ պայմանագրի բեկոր հանդիսացող KUB XXVI 39-ում (թերևս, Սուրսիլիս II-ի և Հայասայի արքա Աննիյասի պայմանագիրը) Արխիտայի Ամպրուպի աստվածը (^ՊU takšannaš) հիշատակվում է որպես հայասական կողմից պայմանագրի կնքմանը վկա աստվածություն։ այսինքն, Արխիտան ավյալ պահին հանդիսացել է Հայասայի քաղաք։

Sala.

Է.Ֆոտերի և Գ.Լևսլանցյանի մոտ սխալմամբ գրված է Šalati...: Այս քաղաքը, բացի մեր տեքստից, հանդես է գալիս ընդամենը մեկ անգամ՝ խեթական օրենքներում, որպես քաղաք, որը ի թիվս մի շարք արևելյան, հյուսիս-արևելյան քաղաքների, ազատված էր պարհակներից (saḫḫan և luzzi)⁵։ Առավելագույնը, որ նշում են մասնագետները, այն է, որ Սալան պետք է գտնվեր Խեթական տերության քաղաքական ազդեցության ոլորտի ծայրամասային գոտիներից մեկում, թերևս, հյուսիս-արևելքում⁶։

Temiya.

^{IRI}Timmiya քաղաքը հիշատակվում է արդեն վերը նշված KUB XXIII 72-ում որպես հակախեթական ապստամբության մասնակիցների (Պախիտուվա և Արխիտու) ասպատակություններից տուժած քաղաք։ Ապստամբների հարձակումների մյուս ուղղությունը Խուվան էր։

Նմանահունչ մեկ այլ տեղանուն (^{URU}Tim(im)na կամ Timmina) հիշատակվում է խեթական արքա Սուպպիլիուլիումսու I-ի և Միտաննիի կախյալ արքա Շուտտիվազայի միջև կնքված պայմանագրի պատմական ներածականում։ Այս քաղաքը ներկայացված է որպես մեկը այն շրջաններից, որոնց բնակչությունը Սուպպիլիուլիումաս I-ի արևելյան արշավանքից ինչ-որ ժամանակ անց փախել և ապաստան էր գտել Խուվանում⁷։

Կարելի է միայն ենթադրել, որ խոսքը կամ այս շրջաններից Խաթթի հարկադիր կերպով տարված վերաբնակիչների կամ զինծառայողների մասին է (երկրորդ բացատրությունը ավելի քիչ է հավանական)։

Վերոհիշյալ տեքստերում հիշատակվող Տիմմիյա և Տիմմինա տեղանունները իրոք կարող են նույնացվել մեր տեքստի ^{URU}Temiya-յի հետ, քանի որ երկուսն էլ, բացի հնչյունական ակնհայտ նմանությունից, գտնվել են Խուվայի մերձակցությամբ։ Այդպես է վարվել իտալացի Մ.-

Ֆարլանինին, որը Տեմիյա-Տիմնիյան (քայց ոչ Սուպալիուլիումաս I-ի տեքստում հիշատակվող Տիմնիմսն) համադրում է Երզնկայից ոչ հեռու գտնվող, Վերին Եփրատի ակունքների շրջանում բյուզանդական աղբյուրներում հիշատակվող Տիմնոնի հետ (ժաման. Ջիմին)⁸:

Litta.

Սա խեթական տեքստերում այս տիղանվան թերևս միակ վկայությունն է, եթե առայժմ ձեռնպահ մնանք բեկորային վիճակում պահպանված մի տեքստում այս նույն տեղանունը վերականգնելու⁹: Էրիսիտա-Արիսիտայի և Տեմիյա-Տիմնիյայի հետ միևնույն ենթատեքստում հիշատակվելու փաստը կարող է վկայել դրա՝ միևնույն աշխարհագրական գոտում գտնվելու օգտին:

Լիտտա քաղաքի մոտավոր տեղադրության հարցում, թերևս, օգտակար կարելի է համարել ուշ ժամանակներում այս տարածաշրջանում վկայված տեղանվանաբանական նյութերի ուսումնասիրությունը:

Այսպես, հռոմեական դարաշրջանից մեզ հասած աղբյուրներում («Անտոնինոս կայսեր երթուղին»)¹⁰, որպես Նիկուպոլիս (ժաման. Փյոտք՝ Շապին-Կարահիսարի մոտ) – Սատալա (հայկ. Սատաղ) ճանապարհի երկրորդ կայան նշված է Olotoedariza-ն (տարածությունը՝ 24 հռոմ. մղոն = կմ): Այս բնակավայրի անվանումն ունի մի շարք տարբերություններ՝ Aladoleariza, Aladadeariza, Aladaleariza և Lytararizon¹¹, և Հ.Տաշյանի կողմից համադրվել է Շապին-Կարահիսարի մոտ հիշատակվող հայկ. Լթառիճի հետ¹²: Լթառիճը կազմված է հայկ. *-առիճ* տեղանվանակերտ վերջածանցով, որը, անհրաժեշտ է նշել, լայնորեն տարածված է եղել հենց ուսումնասիրվող տարածաշրջանում և դրա հարևանությամբ¹³: Մեզ հետաքրքրող տեղանվան տարբերություններից վերջինը (Lytararizon), վերջածանցի առանձնացումից հետո կստանանք Lyta(ra)-, որը միանգամայն համադրելի է հայկ. Լթառիճի հետ:

Ha-x-[.....].

Պահպանված առաջին նշանի հիման վրա հնարավոր չէ որևէ համադրում առաջարկել: Այնուամենայնիվ, որպես աշխատանքային վարկած կարելի է նկատի ունենալ վերոհիշյալ «Անտոնինոս կայսեր երթուղում» Սատալա-Սատաղին նախորդող Haza բնակավայրը (առաջինից 26 մղոնի վրա), որին Պատինգերյան քարտեզում համապատասխանում է Hassis-ը¹⁴:

Վերինեփրատյան տարածաշրջանի
պատմական աշխարհագրության խնդիրները

Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների այն հատվածը, որն ընկած է Եփրատի որուրանի հյուսիսակողմում, ընդհուպ մինչև ակունքները և որը հետագայի հայկական աղբյուրներում բաժանված էր Բարձր և Փոքր Հայքերի միջև, կարևորագույն նշանակություն ունի խեթա-հայաստական և խեթա-խուվական փոխհարաբերությունների ճիշտ ընկալման, ինչպես նաև Հայաստանի տեղադրման տեսանկյունից: Այս խնդիրը մասնագետների կողմից արծարծվում է պոլեմ ավելի քան 70 տարի և առ այսօր տարածայնությունները գերակշռում են¹⁵:

Այսօր խեթագիտության մեջ արմատացած է այն տեսակետը, որ առնվազն Սուրաբիուլիումսու I-ի և Հայաստյի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրի¹⁶ ժամանակներից, Հայաստան և Ազգին կազմել են մեկ քաղաքական միավոր, ընդ որում Ազգին գտնվել է Խաթթինի ավելի մոտ. այն է՝ Հայաստանի արևմտյան մասը¹⁷:

Այս տեսակետը դժվար է վիճարկել, քանի որ բոլոր առկա սկզբնաղբյուրներում խեթա-հայաստական ընդհարումները սկսվում են Ազգիի հիշատակությունից¹⁸: Իսկ մ.թ.ա.XIII դարում, երբ Խաթթինի քաղաքական ուժ-ղեցությունը արևելքում սահմանափակվում էր միայն Իսուվայով, Հայաստան անվանուպես այլևս չի հիշատակվում. այս շրջանի տեքստերում հանդես է գալիս միայն Ազգին, այն էլ որպես Խաթթինի թշնամի երկիր¹⁹: Թե մինչև երբ կարող էին Հայաստան և Ազգին մնալ որպես այս ենթադրյալ լաշնային քաղաքական միավորի բաղադրիչներ, պարզ չէ:

Ազգիի մերձայնտական տեղադրության մասին օտարալեզու գրականության մեջ մինչև վերջերս գերիշխող տեսակետը, որի համար հիմք էր ծառայում Ազգիի Արիպսս քաղաքի՝ «ծովի մեջ» գտնվելու մասին վկայությունը (Սուրաբիու II-ի տարեգրություններում), որևէ կերպ չէր տեղավորվում հյուսիս-արևելյան Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան շրջանների ֆիզիկական քարտեզի, ինչպես նաև Խաթթինի արևելյան քաղաքականության համատեքստի մեջ: Հիմնական քաղաքությունը հետևյալն էր:

Ազգին Սև ծովի ափին տեղադրելիս (Արիպսս = Ժաման. Գիրեսուն), կտրվում էր տարածքային կապը (կամ, համեմայնդեպս, խիստ դժվարանում է) Հայաստանի հետ: Այսպես, որպեսզի նվաճվի Հայաստան, Սուրաբիու II-ը, ըստ Ջ.Գարստանգի և Օ.Գրոնիլի²⁰, սկզբում պետք է հասներ մինչև Գիրեսուն, այնուհետև կարողանար հայտնվել Ժաման. Շապին-Կարս-հիստրի մոտ (այստեղ էր տեղադրվում հայաստական Դուզգաման): Ավելին, հենց Շապին-Կարսահիստրի տեղում էր դրվում Ազգիի՝ Խաթթինի անմիջապես սահմանակից Ուրա քաղաքը: Եթե խեթա-ազգի-հայաստական սահմանը անցնում էր այս շրջանով, ապա ուղակի հնարավոր չէ

պատկերացնել Ազգիի տարածքը Շապին-Կարահիսարից Գիրեսուն ընկնող հատվածում:

Ոչ պակաս կարևոր է նաև այն, որ Խաթթիի արտաքին քաղաքականության ծայր արևելքում Հայաստանի և նույն տարածաշրջանի այլ երկրների հետ բախումները վկայված են այն նույն տարածքներում, որոնք, ըստ մեր ուսումնասիրության տուրքկա տեքստի, տեղի են ունեցել Գայլ գետի վերին հոսանքների շրջանում, մասնավորապես Երզնկայի դաշտում:

Այսպես, ժամանակագրորեն ամենավաղ հիշատակությունը պարունակում է Առնուվանդաս I-ի վերը հղված տեքստը (KUB XXIII 72), որտեղ խոսվում է Կումմախայի մոտ ապստամբ Պախխուվայի և նրա դաշնակից Աբխիտայի դեմ մղված ճակատամարտի մասին: Հայտնվում է նաև, որ ճակատամարտից հետո արխիաացիները ապաստան էին գտել Պախխուվայում: Ի դեպ, սա կարելի է բավական վստահելի փաստարկ ընդունել հոգուտ այն ենթադրության, որ Պախխուվան, ինչպես նաև Աբխիտան, պիտի գտնվեին Կումմախայից ոչ շատ հեռու, եթե ոչ հարևանությամբ:

Հաջորդ հիշատակությունը Սուպպիլուլիումաս I-ի գործունեությունը նկարագրող մեծածավալ տեքստի մի հատվածն է, որտեղ խոսվում է Հայաստանի արքա Կարաննիսի դեմ կազմակերպված արշավանքի և ճակատամարտի մասին նույն Կումմախայի մոտ²¹:

Ավելին, մ.թ.ա.XIIIդ. մի խեթական տեքստում²² հիշատակվում է Կումմախայի մոտ գտնվող լեռան վրա եղած խեթական պահակակետը, որը մեղադրվում էր աստծուն տրվելիք երկրպագության մեջ թույլ տված թերացումներում: Միևնույն տեքստում հիշատակվում է Կումմախայի Պիրվա աստծո տաճարը՝ հարակից տուճառապատկան հողերով, Այս վերջին տեքստը, մեր կարծիքով, միանշանակ վկայում է, որ նույնիսկ Խաթթիի քաղաքական ազդեցության թուլացման շրջանում, Կումմախան անմիջականորեն վերահսկվում էր խեթերի կողմից:

Վերը նկված տեքստային վկայություններից կարելի է եզրակացնել, որ Կումմախան և հարակից շրջանը մի տարածք էր, որը Խաթթիի համար Հայաստանի դեմ տեղի ունեցած պատերազմների, համապատասխանաբար, նաև այլ բնության շփումների կենտրոն էր, որը խեթերն իրենք էին անմիջականորեն վերահսկում²³: Կասկածից վեր է նաև այն, որ Կումմախան չէր կազմում տարածաշրջանի երկու կարևոր երկրներից որևէ մեկի մասը (Հայաստանի կամ Իստվայի), այլ դիտվում էր որպես առանձին քաղաքական միավոր²⁴:

Երբ և ինչպիսի քաղաքական ենթատեքստում կարող էր Բարձր Հայքի արևմտյան հատվածը, այն է՝ Գայլ գետի միջին և վերին հոսանքների շրջանը հայտնվել խեթերի վերահսկողության տակ և մնալ որպես այդպիսին ընդհուպ մինչև Խաթթիի անկումը:

Հայտնի է, որ վերինեփրատյան տարածաշրջանը նվաճվել էր խեթերի կողմից մ.թ.ա. XV դ. վերջերին – Թուդխալիյաս I (II)-ի կողմից: Վերջինիս «Տարեգրություններին»²⁵ խիստ վնասված հատվածում հիշատակվում է Իսուվայի նվաճումը, որը տեղի էր ունեցել արքայի կառավարման վեցերորդ տարում²⁶: Հայաստայի կամ Ազգիի նվաճման մասին Թուդխալիյասի տեքստերում որևէ հիշատակություն չկա, որ կարելի է բացատրել ոչ այնքան տեքստի պակասավոր վիճակով, որքան այդ երկրի հետ անմիջական բախման բացակայությամբ, իսկ ավելի ստույգ՝ տվյալ պահին քիչ ավելի ուշ շրջանից հայտնի Հայասա (գուցեև Ազգի) տերմինների բացակայությամբ: Թուդխալիյասի հաջորդ Առնուվանդաս I-ի լավ հայտնի KUB XXIII 72 տեքստում (տես վերը) նույնպես Հայասան չի հիշատակվում, սակայն դրա կազմում գտնվող Արխիտուս և Դուգզամա քաղաքներից առաջինը հանդես է գալիս որպես խեթերից կախյալ, երկրորդը՝ թշնամի քաղաքական միավոր:

Հայասան առաջին անգամ հիշատակվում է նույն Առնուվանդասի կամ նրա հաջորդ Թուդխալիյաս III-ի օրոք կազմված մի տեքստում (HKM 96)²⁷: Այն խեթական արքայի մամակն է՝ ողողված Տապիզգա քաղաքում²⁸ գտնվող մի բարձրաստիճան պաշտոնյայի, որտեղ վերջինիս նսնձնալարվում է գորահավաք կազմակերպել դեպի Հայասա արշավանքի կապակցությամբ: Ջորահավաքի աշխարհագրությունը լայն է՝ Հայիսի վերին և միջին հոսանքներից մինչև Իսուվա:

Վերոհիշյալ երկու տեքստերից (KUB XXIII 72 և HKM 96) դժվար չէ ենթադրել, որ Հայասույի կազմավորումը որպես ինքնուրույն քաղաքական ուժ պետք է թվագրել մոտավորապես Թուդխալիյաս I (II) – Թուդխալիյաս III ժամանակահատվածով (թերևս, Առնուվանդաս I-ի կառավարումով): Սա, իհարկե, չի նշանակում, որ Հայասան չէր կարող գոյություն չունենալ դրանից ավելի վաղ, բնականաբար, ավելի նեղ աշխարհագրական ընդգրկումով: Հայասույի կազմավորման շրջանում դրա հետ խեթերի ունեցած ընդհարումների և հաջորդած քաղաքական փոխհարաբերությունների մասին կան նաև այլ հիշատակություններ:

Այսպես, Սուպլիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրում (տեքստի 4-րդ սյունակը ներկայացնում է Խուկկանայի նախորդ Մարիյասի հետ Թուդխալիյաս III-ի կնքած պայմանագիրը)²⁹ խոսվում է Մարիյասի՝ Խաթթուսաս գնալու և այնտեղ սպանվելու մասին: Իսկ պայմանագրի ներածականից հայտնի է դառնում, որ Խուկկանան Հայասույի արքա էր դարձել Սուպլիլուլիումաս I-ի օժանդակությամբ: Նա ծագումով ազգեցի էր: Այսինքն, Հայասայի հետ Մարիյասի օրոք կնքած պայմանագիրը ինչ-ինչ պատճառներով չի բավարարել խեթերին և նրանք որոշել են այստեղ արքա նշանակել ազգեցի Խուկկանային:

Վերոհիշյալի լույսի տակ դիտելով KUB XXVI 62, KUB XXIII 72 և HKM 96 տեքստերը, կարելի է հանգել եետևյալ եզրակացություններին:

1) Վերին Եփրատի հյուսիսակողմում գտնող շրջաններում խեթական ներկայությունը (Թուդիսալիյաս I(II)-ից սկսած) պետք է ընդգրկեր հայասական որոշ տարածքներ (ըստ տեքստի՝ Էրխիտա-Արխիտուն, հավանաբար, մաս այլ շրջաններ): Դժվար է ասել, թե ինչ դրդապատճառներով էր պայմանավորված խեթերի ներկայությունն այստեղ: Այնուամենայնիվ, հազիվ թե դրանց հիմքում ընկած լիներ միայն տեղության արևելյան սահմանների անվտանգության խնդիրը:

2) Արդեն Առնուվանդաս I-ի օրոք նշված տարածաշրջանում սկսվում են խեթական տիրապետությունը թոթափելու փորձեր, որը վկայված է KUB XXIII 72-ում: Դրանցում ներգրավված էր հայասական Արխիտուն, սակայն ոչ բոլոր հայասական քաղաքներն էին մասնակցում. այսպես, մույն տեքստից հայտնի է, որ Դուգզաման դեռևս լոյալ էր Խաթթիի հանդեպ: Իսկ Առնուվանդաս I-ի կառավարման վերջերին կամ Թուդիսալիյաս III-ի օրոք արդեն հանդես է գալիս Հայասան (HKM 96), որպես մի երկիր, որի դեմ մեծ արշավանք էր կազմակերպվում. Նույն Թուդիսալիյաս III-ի կառավարման հաջորդ փուլում, ըստ Խաթթուսիլիս III-ի հայտնի տեքստի³⁰, Ազգին (երևի թե Հայասան), արդեն ձևավորված լուրջ քաղաքական միավոր, նվաճում է խեթական տարածքները ընդհուպ մինչև Սամուխա քաղաքը: Ինչ-որ ժամանակ անց Թուդիսալիյաս III-ը կարողանում է ետ մղել հայասացիներին և ճակատամարտ տալ նրանց Կում-մախայի մոտ (տես վերը):

3) Վերջին, թերևս առավել կարևոր խնդիրը ուսումնասիրվող տարածաշրջանի քաղաքական-էթնիկական բովանդակությունն է: Եթե մի պահ ենթադրենք, որ այն մախապես, մինչև խեթերի կողմից նվաճվելը, մասնակիորեն միայն կարող էր կազմել ապագա Հայասայի տարածքը, և հաջորդող շուրջ 200 տարիների ընթացքում համարվել է ինքնուրույն քաղաքական միավոր՝ Խաթթիի գերիշխանության պայմաններում, ապա ամխոսափելիորեն պիտի սեփական դիմագիծն ունենար: Թե ինչպիսին էր այն, առայժմ, պարզ չէ: Համենայնդեպս, հենց թեկուզ դրա աշխարհագրական դիրքը Հայասայի (արևելքից), Իսուվայի (հարավից) և Խաթթիի (արևմուտքից) միջև, կարող է որոշակի հիմք հանդիսանալ մնացած հարցադրման համար:

THE CUNEIFORM HITTITE TEXT KUB XXVI 62 AND THE PROBLEM OF THE HISTORICAL GEOGRAPHY OF THE UPPER EUPHRATES BASIN

The article deals with the Hittite text KUB XXVI 62 (late XV century B.C.), which contains the list of cities, from where soldiers were recruited for the Hittite army. Some of these cities should be located on the territory of later Armenian province of the Upper Armenia, particularly in the River Gayl basin. Among these cities Litta probably is identical with the medieval Armenian city of Litaric, about 24 Roman miles (= km) to the east of Nikopolis (near modern Shapin-Karahisar) on the route towards Satala.

Taking into account this and some other Hittite texts the author gives a sketch of historical geography of the region.

ՃԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ամբողջական հրատարակությունը՝ E. von Schuler. Die Kaškar. Berlin, 1965, S.142-145.
2. Միայն Գր.Ղափանցյանն էր ժամանակին անդրադարձել այստեղ հիշատակվող տեղանուններին (Գր. Капанцян. Хайаса-колыбель армян. Ер., с.96 и прим. 2, առանց հղելու այդ հատվածում վկայված չորս տեղանունները հիշատակող Է.Ֆոտերի հոդվածը. տես հաջորդ ծանոթ.):
3. E. Fourn. Hájasa-Azzi. - „Caucasica“ IX, 1931, S.8.
4. Keilschriftkunden aus Boghazköi. XXIII 72 Դ-Կ 43.
5. Keilschrifttexte aus Boghazköi VI 2 III 12 = VI 3 III 15 = VI 6 I 19. (15) ka-ru-u ERIN^{MES} Ma-an-da ERIN^{MES} Sa-a-la ÉRIN^{MES} URU^U Ta-ma-al-ki [(ERIN^{MES} URU^U Ha-at-ra-a)]. (16) ÉRIN^{MES} URU^U Za-al-pa ERIN^{MES} URU^U Ta-aš-hi-ni-ya ERIN^{MES} URU^U He-mu-wa LÚ^{MES} GIŠ [(BAN LÚ^{MES} NAGAR IZ-ZI)]. (17) LÚ^{MES} KUŠ, U LÚ^{MES} ka-ru-ha-li-is-me-eš-ša lu-uz-zi Ú-UL [(kar-pi-i-e)-er], (18) ša-aḫ-ha-an U-UL e-še-er: «(15) Նախկինում Մանդայի զինվորները, Տամալի(յա)յի զինվորները, [Խատրայի զինվորները], (16) Ցալպայի զինվորները, Տախիմիայի զինվորները, [Նետաճիգները], (17) կառավարները և արհալի-մարդիկ luzzi չէին [կրում], (18) šahhan չէին կատարում»:
6. «Խեթական տերության սահմանային շրջաններից մեկում գտնվող քաղաքի հարևանությամբ քնակվող օտար ցեղ» (F. Sommer. Hethiter und Hethiterreich. Stuttgart, 1947, S.5f.; F. Imparati. Le leggi ittite. Roma, 1964, p.242; B. J. Collins. § 54 of the Hittite Laws and the Old Kingdom Periphery. - „Or.“ 56, 1987, p.140 [խեթահպատակ ցեղ]):
7. Հրատարակությունը՝ E. Weidner. Politische Dokumente aus Kleinasien. I. Leipzig. 1923, N.1; G. Beckman. Hittite Diplomatic Texts. Atlanta, 1996, N.6a, p.38ff.
8. M. Forlanini. Atlante storico del Vicino Oriente. fasc.4.3, Roma, 1986, Tav.XVI. Ավելի վաղ Ցիմիննի հետ Վ.Խաչատրյանը համադրել էր խեթական արքա Խաթթուաիի III-ի տեքստերից մեկում հիշատակվող URU^U Timmina-ն և վերը

- հղված ^{URU}Tim(im)na/Timmina-ն (B. H. Хачатрян. Восточные провинции Хеттской империи. Ер., с.86сл): Հարկ է նշել, որ սրանցից առաջինի ընթերցումը 1990-ական թթ. կեսերին վերանայվեց և տեղանվան երկրորդ նշանի և ընթերցման հետևանքով այժմ ունենք մեկ այլ տեղանուն (^{CRU}Tikuna), որը արդարացիորեն նույնացվել է հին Աշշուրի տեքստերում (մ.թ.ա.XX-XVIIIդդ.) հիշատակվող "Tigunatum-hi հետ (M. Salvini. Una lettera di Hattusili I relativa alla spedizione contro Hahhum. - „SMEA“ XXXIV, 1994, p.69; նույնի՝ The Habiru Prism of King Tunip-Tešsup of Tikunani. Roma, 1996. p.11ff.): Այս Տիկունան մոտավորապես տեղադրվում է Եփրատի միջին հոսանքներում՝ Ժաման. *Ջագիրայի* շրջանում, մի տարածքում, որը հետագայում կազմել է Սիտամնիի արևմտյան մասը: Ի դեպ, ավելորդ է նշել, որ Խաթթուաիի I-ի նույն տեքստում արդեն ^{URU}Tikuna-յի հետ հիշատակվող ^{URU}Hahhum-ը, քնականաբար, որևէ առնչություն չի կարող ունենալ Եկեղյաց գավառի *Խախ* ավանի հետ: Խախիումը այժմ մասնագիտական հրատարակություններում նույնացվում է Ժաման. *Սամաստի* (դասական աղբյուրների *Սամոսատա*)(M. Forlanini. Loc.cit.) կամ դրանից ոչ հեռու գտնվող *Լիդար հյոյոյ* հնավայրի հետ (M. Liverani. The Fire of Hahhum. - „Oriens Antiquus“ XXVII, 1988, p.165ff.):
9. KUR ^{URU}Li-it-[.....](KBo XXII 17. 8'): Այս պատմական քնույրի տեքստի բեկորում միանգամայն հնարավոր է տեսնել մեզ հետաքրքրող Լիտտա քաղաքը, քանի որ առայժմ խեթական տեքստերում վկայված չէ Lit-ով սկսվող որևէ այլ տեղանուն:
 10. W. M. Ramsay. The Historical Geography of Asia Minor. Amsterdam, 1962 (վերատպություն London, 1890 հրատարակությունից). p. 56.
 11. Տրվում են ըստ Գր. Капанцян. Хайаса, с.44 и прим.1.
 12. Հ.Տաշյանը այս տեղանվան համար հղել էր Էփրիկյանի Բնաշխարհիկ քառարանը, հատ.1, էջ 485 (մեր հղումը ըստ Գր.Ղափանցյանի):
 13. Գր. Капанцян. Историко-лингвистическое значение топонимики древней Армении. - В кн.: Научные труды, т.14 (Ереванский государственный университет), Ер., с.402сл.; он е, Хайаса, с.44, прим.1: Դրա հայկական ծագումը նշում է նաև Վ.Ռամսին (Loc.cit., p.56): Այս վերջածանցը երեք անգամ վկայված է նաև խեթական տեքստերում (^{URU}Pittiyariga, ^{URU}Išmeriga և ^{URU}Murmuriga):
 14. Տես ծանոթություն 10.
 15. Հայասա-Ազգիի տեղադրության կարծիքների շուրջ տես J. F. del Monteund J. Tischler. Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte. Wiesbaden, 1978, S.59f., 63f.; J. F. del Monte. Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte. Wiesbaden, 1992, S.19, 22.
 16. Հրատարակությունը՝ J. Friedrich. Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache. Bd.2. Leipzig, 1930. S.103ff.; Վ. Խաչատրյան. Հայաստանը մ.թ.ա.XV-VII դարերում. Եր., 1998, էջ.48-50, 59-67; G. Beckman. Loc.cit., Nr.3, p.26ff.:
 17. A. Götz. Bemerkungen zu dem hethitischen Text AO 9608 des Louvre. - "Revue hittite et asianique" I, S.25; J. Friedrich. Loc.cit., S.103f.; E. Forrer. Hajasa, S.4f.; J. Garstangand O. R. Gurney. The Geography of the Hittite

- Empire. London. 1959. p.29ff.; Լ. Ռարսեդյան. Հայաստան-Ազգիի ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջը. - «ՊԲՀ», 1963/3. էջ.307-308 և այլն:
18. Օրինակ, Մուրսիլիս II-ի «Տարեգրությունների» VII տարում (A. Gotze. Die Annalen des Mursilis. Leipzig. S.95ff.), Խաթթուաիլիս III-ի կամ Թուդխալիլաս IV-ի օրոք կազմված մի շարք գուշակային տեքստերում (KUB XLIX 11; KUB XLIX 70 և այլն):
 19. Այս մասին հստակ տեղեկություն է պարունակում խեթական արքա Թուդխալիլաս IV-ի հայտնի «Հրահանգները՝ տրված սահմանային կառավարիչներին» (E. von Schuler. Hethitische Dienstsanweisungen für höhere Hof- und Staatsbeamte. Graz. S.24f.), որտեղ Ազգին հիշատակվում է որպես Խաթթիին բշմամի երկիր: Այս տեքստը, ինչպես նաև նույն ժամանակներում կազմված մի շարք գուշակային տեքստեր (IBOT I 32; KUB XLIX 11; KUB XLIX 70 և այլն) միանշանակ վկայում են այն մասին, որ արդեն մ.թ.ա.XIII դ. կեսերին Ազգին դուրս էր եկել Խաթթիի քաղաքական գերիշխանության ոլորտից:
 20. J. Garstang and O. R. Gurney. Geography, p.36ff.
 21. Fragment 13, 44 (H. G. Güterbock. The Deeds of Suppiluliumas as Told by his Son, Mursilis II. - „JCS“ X, 1956, p.66).
 22. KUB LV I (համապատասխան հատվածի հրատարակությունը և մեկնաբանությունը՝ Ա. Քոսյան. Անի-Կամախը խեթական դարաշրջանում. - «ՊԲՀ», 2002/3, էջ.233, 238-240):
 23. Այս մասին տես Ա. Քոսյան. - «ՊԲՀ», 2002/3, էջ.236.
 24. Խեթական երկու տեքստերում (KBo II 9 + KUB XV 35 և KUB XV 34) Կումմախան բվարկվում են միևնույն ենթատեքստում որպես առանձին քաղաքական միավորներ (տեքստերի համապատասխան հատվածների հրատարակությունը՝ Ա. Քոսյան. - «ՊԲՀ», 2002/3, էջ.230-232).
 25. Հրատարակությունը՝ O. Carruba. Beiträge zur mittelhethitische Geschichte. I-II. - „SMEA“ 18, 1977, S.161ff.
 26. Ph. H. J. Houwinkten Catc. The Records of the Early Hittite Empire. Istanbul, p.59 n.14.
 27. S. A I p. Hethitische Briefe aus Ma* at-Höyük. Ankara, 1991, S.298ff.; նաև Ա. Քոսյան. Նոր նյութեր Խեթական տեղության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին. - «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» XX, Երևան, 2001, էջ.233-245:
 28. Շնորհիվ այս խոշոր արխիվի, Տապիգզան արդեն հստակ տեղադրվում է ժաման. *Մաշատ-հյոյուքում Ձիլե* քաղաքից 30կմ հարավ-արևմուտք (նույնացումը՝ S. A I p. Die hethitischen Tontafelentdeckungen auf dem Maşat-Höyük. - „Belleren“ XLIV/173, 1980, S.58f.).
 29. Հրատարակությունը՝ J. Friedrich. Loc.cit., S.103ff.; G. Beckman. Loc.cit. (բարգմանությունը), p.22ff.
 30. KBo VI 28 (մասնակի հրատարակությունը՝ E. Forrer. Forschungen. I.I. 1926, Berlin, S.35f.; Fr. Bilabel. Geschichte Vorderasiens und Ägyptens vom 16.-11. Jahrhundert v.Chr. Heidelberg, 1927, S.307f.; A. Goetze. Kizzuwatna and the

Problem of Hittite Geography. New Haven, 1940, p.21ff.; Fr. Cornelius.
Geographie des Hethiterreiches. - „Or.“ 27, 1958, S.237f. 1 uylü;